

## ԿԱՐԾԻՔ

*Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի հայցորդ Հասմիկ Արմենի Լեյլոյանի «Իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման իրավափիլիսոփայական առումները» վերառությամբ ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու ատենախոսության վերաբերյալ*

Հասմիկ Արմենի Լեյլոյանի «Իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման իրավափիլիսոփայական առումները» վերառությամբ ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու ատենախոսության թեման արդիական է, այն նվիրված է իրավունքի հնարավորությունը իրականության վերածելու իրավափիլիսոփայական արդի ասպեկտներին, որոնք իրավական կարգավորումների և իրավական մշակույթի ներկայիս հարափոփոխ պայմաններում ձեռք են բերել աննախադեպ նշանակություն, քանզի նշված առումներով հետազոտությունը հնարավորություն է տալիս առավել հիմնարար ու խորքային չափանիշներով ուրվագծելու իրավունքի ձևավորման և իրացման նախադրյալները և այլն: Արդիական են նաև ընտրված թեմային առնչվող հեղինակի կողմից առանձնացված հարցադրումները թե՛ տեսական, թե՛ իրավաստեղծ և իրավակիրառ հարթությամբ, ինչի առնչությամբ հեղինակը շարադրել է արժեքավոր հիմնավորումներ:

Ընդհանրապես, այսպիսի հիմնարար տեսաիրավական թեմա ընտրելը և դրանք նաև գործնական հարթությամբ դիտարկելը պահանջում է որոշակի գիտական համարձակություն և պատասխանատվություն, քանզի այս պարագայում ընդհանուր հետազոտական մեթոդաբանությունն ու չափանիշներն ինքնին ի գործու չեն երաշխավորելու անհրաժեշտ ստեղծագործական արդյունավետություն, հարկ է դիմել

ինքնատիպ ստեղծագործական ուղղությունների, և այս ամենի հաշվառմամբ ատենախոսությունը կարելի է միանշանակ հաջողված համարել:

Հեղինակը, ի թիվս այլնի, թեմայի արդիականությունը, մասամբ՝ նաև հրատապությունը դիտարկել է հետևյալ տեսանկյունից. «Սույն հետազոտության թեմայի շրջանակում ներառված են «հնարավորություն» և «իրականություն» հասկացությունները, քանի որ դրանց միջոցով հնարավոր է դառնում իրավունքը դիտարկել շարժման մեջ և հստակ մատնանշել տեսականի՝ որպես հնարավորության և փորձնականի՝ որպես իրականության վերածման գործընթացն իրավունքում: Բացի այդ, այն հնարավորություն է տալիս վեր հանելու իրավական երևույթների և իրողությունների զարգացման օրինաչափությունները և ըստ այդմ՝ նախագծելու իրավակարգի ամրապնդման, իրավակարգավորման արդյունավետ կառուցակարգերի ներդրման կամ իրավունքի և օրենքի կենսագործման արդյունավետության բարձրացման ուղիները կամ մեթոդաբանությունը, ինչն անշուշտ իրավունքի և պետության ընդհանուր տեսության և ընդհանրապես իրավագիտության արդի և հրատապ խնդիրներից է»:

Աշխատանքը պատրաստված է գիտական անհրաժեշտ բարեխղճությամբ, այն ինքնուրույն հետազոտության արդյունք է, ինչն ուղեկցվել է ինքնատիպ եզրահանգումներով: Ատենախոսությունում չկան այլոց մտքերն ու դատողությունները, միջազգային զեկույցներում արտացոլված մոտեցումները որևէ կերպ յուրացնելու փաստեր, նյութը շարադրված է հստակ գիտական ու տարընթերցումների տեղիք չտվող ակադեմիական լեզվաոճով: Այլ գիտնականների տեսակետերը վերլուծելիս, այդ թվում՝ դրանց հետ չհամաձայնվելու դեպքերում, հեղինակը դրսևորել է պատշաճ ակադեմիական բարեվարքություն:

Աշխատանքի ձևավորումը ամբողջովին համապատասխանում է ներկայացվող պահանջներին: Ընդհանուր առմամբ ապահովված է պաշտպանության ներկայացվող դրույթների ինքնատիպությունը, դրանց շարադրանքի պահանջվող հստակությունը, ինչպես նաև ներքին համակարգային կապը:

Հետազոտության համար ընտրվել են մեծ ծավալի և շրջանակի գրականության աղբյուրներ, նորմատիվ փաստաթղթեր, իրավակիրառ և դատական պրակտիկայի նյութեր ու այլ իրավական փաստաթղթեր: Հեղինակը ողջամիտ սահմաններում անդրադարձել է ինչպես հայրենական, այնպես էլ օտարալեզու աղբյուրների՝ ապահովելով դրանց անհրաժեշտ համամասնությունը:

Աշխատության կառուցվածքի առնչությամբ գտնում ենք, որ հեղինակն ընտրել է հիմնավորված ու տրամաբանական չափանիշներ, ինչը հնարավորություն է տվել նախ, անդրադառնալու առավել ընդհանուր և եզրահանգումների համար կարևոր նյութ հանդիսացող հարցադրումների, այնուհետև դրանց արդյունքներով վերլուծել դրանց կիրառական ուղղությունները: Թերևս, նշված կառուցվածքն ընտրելիս, հեղինակը գործել է հիպոթետիկ-դեդուկտիվ մեթոդաբանությամբ, քանզի ոչ միայն բխեցրել է եզրահանգումներ, այլև փորձել է դրանք ներկայացնել որոշակի հանդիպակաց ուսումնասիրությամբ: Հարկ է հավելել, որ աշխատանքի կառուցվածքը, ինչպես և թեմային առնչվող հարցադրումների, դրանց շարադրանքի ընտրությունը անթաքույց առանձնանում են ինքնատիպությամբ:

Ատենախոսությունը, դրական գնահատելով հանդերձ, անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ այն զերծ չէ որոշ թերություններից, որոնց առնչությամբ մեր նկատառումները հնարավորինս համակարգված ներկայացնում ենք ստորև.

1. Սկզբունքորեն համամիտ լինելով հեղինակի այն դիրքորոշման հետ, ըստ որի՝ «հնարավորություն» և «իրականություն» փիլիսոփայական հասկացությունները հարկ է հետազոտել որպես դիալեկտիկական կատեգորիաներ, ինչը հնարավորություն կտա բացահայտելու վերջիններիս փոխհարաբերության բաղադրիչները, այնուամենայնիվ, կարծում ենք, հեղինակն առավելապես ընդգծել է իրականության վրա հնարավորության ազդեցության գործոնը, ինչը որոշ վերապահումներով կարող էր մասամբ հիմնավորված համարվել, եթե խոսքն ընդհանրապես վերաբերեր «հնարավորություն» և «իրականություն» զուտ փիլիսոփայական հասկացություններին: Սակայն ասանգամ այս դեպքում հարկ է ընդգծել, որ միայն վերապահումներով կարող ենք դիտարկել հիշյալ փոխհարաբերությունում հնարավորության գերակայող դերը,

քանզի այն ապրիորի չի ձևավորվում, այլ մեծապես հենց իրականության արդյունք է: Ըստ այդմ էլ, ատենախոսության ներածական հատվածի 1-ին կետով պաշտպանության ներկայացվող եզրահանգմամբ շարադրվել է հետևյալ միտքը. ««Հնարավորություն» և «իրականություն» հասկացությունները չպետք է դիտարկվեն միմյանցից անկախ, իսկ դրանց էությունը և բովանդակությունը համալիր կարող են բացահայտվել միայն այնպիսի փոխհարաբերության մեջ, որտեղ իրականությունը հանդես է գալիս որպես ձև կամ տեսական հարթություն, որին գալիս է լրացնելու հնարավորությունը՝ որպես նյութ (մատերիա) կամ փորձնական հարթություն»:

Ընդ որում, ատենախոսությունում այս երկու հասկացությունները, ինչը բխում է նաև թեզի վերտառությունից, դիտարկվել են իբրև իրավական հնարավորություն և իրավական իրականություն, որոնց պարագայում արդեն միայն հնարավորությունը չէ, որ առանձնանում է որոշակի ազդեցությամբ, քանզի հնարավորության սահմանները և բովանդակությունը կանխորոշվում է նաև իրավական իրականությամբ, ինչն առավել ընդգծելի է դարձնում այս երկու կատեգորիաների դիալեկտիկական կապը: Ընդ որում, այս դիալեկտիկ կապը հստակ արտացոլված է թեմայի առանձին հարցադրումներին նվիրված նաև հեղինակի դատողություններում:

2. Անդրադառնալով իրավունքի համատեքստում «իրականություն» հասկացությանը, հեղինակը տարբերակել է իրավունքն իր կենսագործումից կամ իրավունքի օբյեկտիվ (իրական) կեցությունը՝ իրավական իրականությունից: Ըստ էության, հեղինակը հանգել է այն եզրակացության, որ «իրավական իրականությունը իրավունքի էության դրսևորման, իրավունքի օրինաչափությունների կենսագործման, ինչպես նաև հասարակության իրավագիտակցության արտացոլման ձև է: Այլ կերպ ասած՝ իրավական իրականությունը կազմում է իրավական համակարգի նյութականացված մասը»: Իրավունքի և իրավունքի կենսագործման այսպիսի փոխհարաբերակցությունը, կարծում ենք, հնարավորություն չի տալիս ելակետ ընդունելու այն, որ իրավական համակարգը ևս նյութականացված մաս է, այն ևս հնարավորության վերածման արդյունք է, քանզի, ինչպես նաև հեղինակն է պնդում, իրավական համակարգը ձևավորվում է սուբյեկտիվ կամքի հենքով, իհարկե՝ օբյեկտիվ

գործոնների ազդեցության ներքո: Իրավական համակարգի ձևավորման ողջ գործընթացը ևս իրավունքի կենսագործման ինքնուրույն դրսևորում է:

3. Կարծում ենք, իրավասուբյեկտության հիմքում ևս «հնարավորություն» իրավափիլիսոփայական հասկացությունը դիտարկելը հարկ էր առավել ամբողջական հետազոտել: Ըստ հեղինակի՝ «Իրավունակությունը կամ իրավագործունակությունը և սուբյեկտիվ իրավունքները, ըստ էության, իրավական հնարավորության զարգացման տարբեր փուլեր են, որտեղ սուբյեկտիվ իրավունքը դրանց հաջորդող փուլն է: Այս մոտեցումը վերաբերելի է նաև իրավունքի սուբյեկտի իրավական պատասխանատվությանը («դելիկտունակություն» և «գործարքալնդունակություն»): Կարծում ենք, հետազոտությունն առավել շահեկան կլիներ, եթե հեղինակը համալիր անդրադառնար սուբյեկտիվ իրավունքների իրացման, որպես ինքնուրույն փուլի հնարավոր դրսևորումներին, մասնավորապես անդրադառնար սուբյեկտիվ իրավունքի իրացման այն հիմքերին, որոնց պարագայում չի պահանջվում անձի սուբյեկտիվ կամքի արտահայտումը, այսինքն՝ այդ իրավունքներն իրացվում են իրավունքի ուժով: Այս ասպեկտը, մեր կարծիքով, խիստ արդիական է, քանզի իրավական մշակույթում դեռևս գերիշխում է այն մտայնությունը, որ սուբյեկտիվ իրավունքի իրացման համար հարկ է սուբյեկտի կամքի հստակ արտահայտումը: Այսպիսի համընդհանուր խոցելի ընկալումների համատեքստում ունենում ենք հնարավորությունը իրականության վերածելու խիստ պայմանական համակարգ, իսկ արդյունքում ոչ միայն սահմանափակվում է սուբյեկտիվ իրավունքների իրացման հնարավորությունը, այլև անհարկի մեծ ծավալ է կազմում և անմիտ ծախսերի է հանգեցնում պետական վարչարարությունը: Օրինակ՝ սահմանային տարիքը լրանալու հիմքով, առանց որևէ կամահայտնության դատավորի լիազորություններն իրավունքի ուժով դադարում են, մինչդեռ՝ նույն հիմքը բավարար պայման չի համարվում դատավորին կլենսաթոշակ նշանակելու համար, ըստ այդմ էլ պահանջվում է, որպեսզի վերջինս գրավոր դիմում ներկայացնի, կցելով այն փաստաթղթերը, որոնք արդեն իսկ լիարժեք առկա են նույն պետական իշխանության իրավասու մարմինների տրամադրության տակ: Ստացվում է, որ միևնույն հիմքով սուբյեկտիվ պարտականության պարագայում հարկ չի համարվել



կամահայտնությունը, մինչդեռ՝ սուբյեկտիվ իրավունքի պարագայում՝ պահանջվում է: Կարծում ենք, հետազոտության ընդգրկվածությունն առավել համալիր կլիներ, եթե հեղինակը անդրադառնար հնարավորությունը իրականություն վերածելու հիշյալ ասպեկտներին: Այս դեպքում պաշտպանության ներկայացվող եզրահանգումը՝ կապված իրավունքը՝ որպես հնարավորություն վերածելու պայմանների հետ, կլիներ առավել ամբողջական:

Ընդհանրապես, հնարավորությունը իրականության վերածելու համատեքստում ատենախոսությունում առավելապես հետազոտության նյութ են դարձել հետևյալ գործոնները՝ իրավունքի էության զարգացման դիալեկտիկան, օբյեկտիվ օրինաչափությունները, օրենսդրությունը և սուբյեկտիվ իրավունքը կրող անձի կամքը: Կարծում ենք, այս տեսանկյունից հետազոտությունն առավել ամբողջական կլիներ, եթե քննարկման առարկա դառնար իրավակիրառ իրավասու մարմնի գործունեությունը, դրա իրավաչափության աստիճանը, քանզի մասնավոր սուբյեկտի կամքը ոճ միշտ է վճռորոշ և այլն:

Ատենախոսության հիմնական դրույթները համարժեք ընդգրկմամբ և խորությամբ արտացոլված են հեղինակի թվով 6 գիտական հոդվածներում, որոնք բոլորն էլ հրատարակվել են ՀՀ ԲԳԿԳ-ի կողմից սահմանված գիտական հանդեսներում:

Ամփոփելով հիշյալ ատենախոսության վերաբերյալ հիշյալ դիտարկումներն ու նկատառումները, գտնում ենք, որ հեղինակը կատարել է ծավալուն և արդյունավետ աշխատանք, այն աչքի է ընկնում ինքնուրույնությամբ և պահանջվող աստիճանի ինքնատիպությամբ: Ատենախոսությունը պատրաստված է ինչպես բովանդակային, այնպես էլ ձևավորման պահանջներին համապատասխան:

Այսպիսով, Հասմիկ Արմենի Լեյլոյանի «Իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման իրավափիլիսոփայական առումները» վերտառությամբ ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու ատենախոսության

վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ այն համապատասխանում է Կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի N 327 որոշմամբ հաստատված «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ով սահմանված ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, ուստի հեղինակին, Հասմիկ Արմենի Լեյլոյանին կարող է շնորհվել ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

**Պաշտոնական ընդդիմախոս՝**

ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



**ԳԵՎՈՐԳ ԴԱՆԻԵԼՅԱՆ**

07

« 7 » հունվարի 2026 թվական

Պաշտոնական ընդդիմախոս իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գևորգ Դանիելյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ



**ԱՇՈՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

« 7 » հունվարի 2026 թվական

